ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-Ը ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 105 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 24-Ը ՄԱՐՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 83Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի ղեկավարի 24-ը մարտի 2020 թ. «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի 20/03/2020 թվականի մրցույթի արդյունքները հաստատելու մասին» թիվ 83Ա որոշման բովանդակությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. <<Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող, Վարդահովիտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող 1,75 հա /10-041-0201- կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության վարելահող/ հողատեսքը 5 /հինգ/ տարի ժամկետով վարձակալությամբ հատկացնել մրցույթում հաղթող ճանաչված *Ավետիք Մարիբեկի Հովակիմյանին:*

ա.Հողամասի կադաստրային արժեքը կազմում է 1181,25 /մեկ հազար մեկ հարյուր ութսունմեկ ամբողջ քսանհինգ/ ՀՀ դրամ:

բ.Տարեկան վարձավճարը սահմանել 11 500 /տասնմեկ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, որը կազմում է կադաստրային արժեքի 973,54%-ը:

գ.Յուրաքանչյուր ամսվա վարձավճարը կազմում է 958,3 ՀՀ դրամ:

դ.Վարձավճարը վարձակալի կողմից մուծվում է հավասար չափերով՝ ըստ տարվա օրացույցային եռամսյակների, ոչ ուշ քան մինչև համապատասխան եռամսյակի վերջին ամսվա 20-ը:

ե.Առաջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան պայմանագրի ուժի մեջ մտնելուց 10 օրվա ընթացքում:

զ.Վերջին վարձակալական վճարումը կատարվում է ոչ ուշ, քան մինչև պայմանագրի գործողության ժամկետի վերջին ամսվա 25-ը:>>:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-Ը ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 106 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԱՇԱՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և համայնքային ծառայողների մրցույթ անցկացնելու համար թեստեր կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N11-Ն հրամանը

*որոշում եմ՝*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց մրցույթ անցկացնելու հարցաշարերը՝ համաձայն 1-3 հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

22-Ը ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 107 Ա

ՎԱՂԱՐՇԱԿ ՎԱՂԻՆԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Քարագլուխ բնակավայրի բնակիչ Վաղարշակ Վաղինակի Հակոբյանի և նրա ընտանիքի անդամներ՝ հանգուցյալ Վաղինակ Ալեքսանի Հակոբյանի /հայրը/, հանգուցյալ Շողիկ Մաքսիմի Հակոբյանի /մայրը/, Թամամ Վաղինակի Հակոբյանի /քույրը/, Շողիկ Վաղարշակի Հակոբյանի /աղջիկը/, Օֆելյա Ռազմիկի Կիրակոսյանի /կինը/ սեփական տնամերձ հողամասին /կադաստրային ծածկագիր՝ 10-041-010-007, տարածքը՝ 0,052հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Քարագլուխ բնակավայր, փողոց 3, թիվ 79 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

25-Ը ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 108 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 103Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասով

*որոշում եմ՝*

Անվավեր ճանաչել Եղեգիս համայնքի ղեկավարի «Թառաթումբ բնակավայրում գտնվող, Ռազմիկ Պարգևի Հայրապետյանի սեփական տնամերձ հողամասին հասցե տրամադրելու մասին» 12-ը մայիսի 2020 թվականի թիվ 103Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*
25-Ը ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 109 Ա

ԹԱՌԱԹՈՒՄԲ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՆԳՈՒՑՅԱԼ ՊԱՐԳԵՎ ՄԵԼԻՔՍԵԹԻ ՄԵՀՐԱԲՅԱՆԻ, ԵՎ ՆՐԱ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Թառաթումբ բնակավայրի բնակիչ հանգուցյալ Պարգև Մելիքսեթի Մեհրաբյանի /ընտանիքի գլխավորը/, նրա ընտանիքի անդամներ՝ հանգուցյալ Եղիսաբետ Կարապետի Հայրապետյանի /կինը/, Ռազմիկ Պարգևի Հայրապետյանի /որդին/, Գայանե Պարգևի Հայրապետյանի /աղջիկը/, Սվետիկ Ավետիքի Նավիկյանի /հարսը/, Արման Ռազմիկի Հայրապետյանի /թոռը/, Արմեն Ռազմիկի Հայրապետյանի /թոռը/, Ռոման Ռազմիկի Հայրապետյանի /թոռը/ սեփական տնամերձ հողամասին /կադաստրային ծածկագիր՝ 10-024-026-004, տարածքը՝ 0,148հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Թառաթումբ բնակավայր, փողոց 9, նրբ. 1, թիվ 6 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*
26-Ը ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 110 Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Աղնջաձոր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայքնային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության այլ հողեր գործառնական նշանակության, կադաստրային ծածկագիր՝ 10-007-0028- , մակերեսը՝ 0,10413հա հողատեսքին տրամադրել Եղեգիս համայնք, Աղնջաձոր բնակավայր, փողոց 6, փկղ. 2, թիվ 3 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

26-Ը ՄԱՅԻՍԻ 2020 թվականի N 111 Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացի Ռ. Հակոբյանի դիմումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Շատին բնակավայրի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Ռուդիկ Ռուբիկի Հակոբյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը /կադաստրային ծածկագիր՝ 10-035-0254-0027, մակերեսը՝ 0,24295հա/ փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ վարելահողի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ